բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով՝ որոշել է «ԻՆՎԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Միաժամանակ, թիվ «ԿՄՆՀ-ՆԲԲՖ-ԳՀԾ2Բ-26/8» ընթացակարգի ծածկագով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը ըստ gnumner.minfin.am կայքում առկա տվյալների՝ հրապարկվել է 16.01.2026թ.:

Վերոգրյալի հիման վրա՝ նկատի ունենալով, որ վկայակոչված նորմերից, ի թիվս այլոց հետևում է, որ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է, իսկ անգործության ժամկետն առնվազն 10 օրացուցային օր է և այն հանդիսանում է հայցային վաղեմության ժամկետ, Դատարանն արձանագրում է, որ հայցը ներկայացվել է հայցային վաղեմոթյան ժամկետը լրանալուց հետո, քանի որ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 16.01.2026թ., մինչդեռ հայցը էլեկտրոնային համակարգ է մուտքագրվել 30.01.2026թ. ժամը 17:50-ին, այսինքն, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելուց 10 օրացույցային օրը լրացած լինելուց հետո:

Արդյունքում Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից բաց է թողնվել հայցը Դատարան ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետը:

Նշված հիմնավորումներով, Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման, քանի որ լրացել է հայցը Դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը, ինչով պայմանավորված՝ գործի այլ փաստերի հաստատմանը և ապացույցների գնահատմանը չի անդրադառնում:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա՝ նկատի ունենալով, որ հայցվոի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված՝ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE12-A377-4933-A99A հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am